



## 24. ՉԱՐ ՔՈՍԵՆ

Քոսին է՛ծ կ'էղի ու կնիկ մի:

է՛ծ Քոսեն է կըսե. - Է՛ծ, գնա էլի Գիլու տանիս, արժա քզի:

Կ'էլի կէրթա:

Օրերուց օր մի Գել կըսե. - Է՛ծ, քզի կուտիմ, մի գնա իմ տանիս: Քոսի խաթրի համար չէղի, քզի կուտիմ:

Կիգա կըսե. - Քոսա՛, Գել էսօր ընծի գըՖ տվիր է, օր ընծի կուտե, էլ չէրթամ էնոր տանիս, արժում:

Քոսեն կըսե. - Դու գնա արժա, օր էնի քզի կերավ, ես հողա էիմ:

Կէրթա կ'արժա, Գել կուտե գէ՛ծ: Կը թորկե երկու չոր կոտոչ:

- Ջանըմ, - կըսե, - Գել իմա՞լ զիմ է՛ծ կերավ, հէսօր կէրթամ զԳելու տուն փլում, առնիմ զԳել իգամ:

Կէլի կիշկա ծակեն, կը տեսնա ի՞նչ, օր Գել նստուկ է հանդե ուր տուն:

Կէլի կըսե. - Տղա՛, տղա՛, գնա դարբնին ըսե՛ փետատ ու թիակ թը շինա, ընծի իմ ծակեն հնա, ոլա ես պտի էլիմ դուս, թե սպաննիմ, թե մնամ: Գելն ա, կէրթա կիգա, կը զարկվի դուռ, համա կը փսթա, կը պատի գետին, Քոսա դու շլկա ու առ բե:

Ռեսի տղեն կիգա առեջ կըսե. - Քոսա՛, էղի ի՞նչ է:

Կըսե. - Բճրճաթե պճճն է:

Կըսե. - Թի խազար մաքի է, կէնե երկու խազար, ծնուկ մաքի մի տուր, տար թող մըջ քու օջիսին:

Կէլի էտտեղեն ծնուկ մաքի մի կը տա Քոսիւն, Գել կը տանի կը թողնա մըջ օջիտիւն:

Կնիկ կըսե. - Բարոշ թալ վըր թունդրան, Գելի գլոխ վլանք, տանք ռեսի լաճ, տանի թալե մըջ ուր օխչոյիւն. բարանքաթե պանգն է:

Կ'էլի բռնա Գելու չորս ոտք՝ կը զարկե եմման քրի մեջ: Գել ուր փոչեր կը թողա, կէլի կը նստա տան վերին դիւն, էլ չ'իշխնա ընկի դուս, տկլոգ է:

Ռեսի տղեն կիգա, կամեն զբարանքաթե պանգ, կը տանի թողէ մըջ ուր օխչոյիւն: Ձհարիր քլոխ օխչար հըմեն կը խեղդա, կը բերե քոմա դան հետև:

Սարախտան ռեսի տղեն կէլի լերթա, կը տեսի օր թնդում չի կա, էնքան օր հեռելցիր է: Ձեռ կիտա դուռ, դուռ չէրթա ետ:

Էդ ռեսի տղեն կըսե. - Մարդիկ, էկեք մըր հերդսի փաթեր քակեք:

Կէլնիւն հերդսի փաթեր կը քակեն, կը տեսնին ի՞նչ, Գել մի ու գոռոս է՞ծ մի, կը փախնի չուեր ու Գել խեչ:

Կիշկա, օջ օխչար հմեն խեղդուկ, լցուկ վըր իրարու:

Կիգա քոսիւն կըսե. - Ես քու կնիկ կառիւմ էրթամ ընծիկ, դու էրկու խարիր օխչար ընծի գայ էրիր:

Քոսեն է, կիգա զուր կնկա շորեր կը հագնի, կէղի կնիկ, կը նստի չախրակ կը մանե:

Չիրկուն չավտա ե՞փ կէղի, օր Քոսի կնիկ տանի ուրան, զուր հեյֆն առնի:

Կիգա կըսե. - Քոսի՛ կնիկ, Քոսեն հու՞ր է:

Կըսե. - Կարիւմ զքու պատանք, զքու Քոսիւն, ես խաբա՞ր եմ՝ Քոսեն հու՞ր է:

Կէլի գիշեր, զՔոսեն կամնի կերթա, կը տեսի օր Քոսեն է:

Քոսեն է՝ կէլի զռեսի տղեն փոշմիշ կէնե ու կը փախի:

Կը փախի, Գուճրախ խարսնիքի մի ռաստ կիգա:

Կէլի կերթա կը մտնի մարագ մի, խըճոմ մի խուրձ կը վերու, հերկեն կը պառկի հոտի: Չարս ու փեսեն կը բերին էտտեղ:

Փեսեն կըսե. - Ախչի՛, ուտենք-խմենք, նո՞ր գանք քեֆ էնիւնք, թե քեֆ էնիւնք, նոր ուտիւնք:

Կէլի էտտեղ, ուշիկ կնկա գլոխ կը դնա վըր խոտի խըճոմիւն, կերթա, կիգա:

Կըսե. - Ախչի, ծիանա՞կ իգամ, թե իշանակ:

Կըսե. - Ձիանակ արի:

Իմալ օր կը խրխնջա կիգա, Քոսեն կըսես. - Դե շա, միրա՛թ, դե շա, միրա՛թ:

Խարս ու փեսեն կը վախենան, կը փախնին, Քոսեն կելնի, կը ժողվե հուր ու մուր, ու դե յալա՛, մարքեն: Կելի կիգա դարի մի գլոխ, քրդու մի ռաստ կիգա:

Կը տեսնա, օր բեռ մի ռուբ բարձե վըր իշուև, էն դեհեն կիգա:

Կըսես. - Քիրվո՛, էդ քու բեռ ի՞նչ է, բարձեր ես քու իշու վոնն, կիգաս:

Կըսես. - Դըմն է:

Կըսես. - Դըմսն ի՞նչ է:

Կըսես. - Դորի դու աշխրքեն չե՞ս, դըմսն ռուբ է:

Կըսես. - Փշու մի դիր իմ բերնին խմիմ, տեսնինք էտոր քաղցրութեն ի՞նչ է:

Գըղի քոսա, դիր քու բերնին խմա ու թող գբեռ, թը պատի գետին, Քոսեն կը փախի ու քուրդ կը լարա հետև, կը բերա խարսընքտուն մի:

Քոսեն կը փախի, կը մտի էդ տուն: Կը տեսնա օր հըլման խրխի աման, եղ ու խալվոր թոնդրան ին: Ոտ կը մտցա խարչըկաթ ու գըմփցու թոնդիր, թոզ ու դուման կելի, տա վըր խարսնխուրերուն:

Կըսես. - Քոսա՛, հո՞րի իմալ էրիր:

Կըսես. - Քուրթ լարեց իմ հետև, ես փախա, էկա իմ ոտ քիսավ խարչկաթ, պատավ թոնդիր էմալ թոզ ու դուման տվից վըր ձգի:

Կելին գքուրթ կը բռնին, սերսուփ մի կը ծեծին:

Քուրթ կըսես. - ՏՏնավեր, ձեր հայն էրից, հորի՞ դուբ զհայն թողիք, ընծի կը ծեծեք:

Կըսես. - Ընչի՞ դու գմեր հայն լնրիր, օր էկավ դիպավ մեր թոնդիր պատավ, հայն ի՞նչ էր էրիր քզի:

Քոսեն կերթա՛ օր կնիկ մի, քառսուն հավ, քառսուն ձագ կթոնիմ՝ հետևեն է:

Կըսես. - Քոսա՛, մըռնիմ քզի, արի իմ կթոնին մուղաթ կաց, ես էրթամ քաղքի շուկեն, պըտտիմ, իգամ:

Կը բերե էրկու լարան կցե հիրար, կթթան հավ կապե ու ձագեր հետև մեկ մեկու կը կապե ու կը քնի:

Կը տեսնա, օր առծիվ էնդեխեն կիգա, կը վերու զկթթան հավ քառսուն ձագով ու կը թռնի:

Քոսա, դու փետ մի զար արծվուն: Փետ չը դիպի առծվուն, կը դիպի ուր քլոխ, կը կոտրի:

Էդ կնիկ կիգա, կը տեսնի նա ձագ, նա հավ:

Կըսե. - Քոսա՛, հու՞ր ի ծագեր:

Կըսե. - Ես քու ծագերու դարդ չիմ, առծիվ էկավ տարավ, զարկի արծվուն, չը քիսավ, քիսավ՝ իմ գլոխ կոտրավ, իմ գլխու դարդն իմ:

Կերթա քաղքի մի մեջ. կը տեսի մուլե մի քառսուն էշ տնի հանջև ուրին, էտ քաղքի մեջ կը կոռտի:

Մուլեն կըսե. - Քոսա՛, արի զքզի բռնիմ ընծի իշարած, հիսուն դուռուշ կիտամ, տար զիմ էշեր արծա ու արի:

Էնտեղեն կը տանի զէտ քառսուն էշ:

Կը տանի բաղնի մի գլոխ, ամեկ կը գլթա ու կը թալա տակ: Դմեն կը փիտնան:

Աղեն կիգա կը տեսնա, օր քառսուն էշ փիցած: Մեկ քոսեն կայնե բաղնի գլոխ ու թամաշա կ'էնա:

Կերթան, ջուխաբ կը տանին մուլին:

Կըսեն. - Մուլա՛, մուլա՛, չսի՞ս, քու քառսուն էշ փիցած ու Քոսեն էլ բաղնին պատի տակ ու մեռի:

Մուլեն կիգա՝ ի՞նչ տեսնա. իշվանք հողի ու Քոսեն լե փալա մի պառեկին, պատե հողի ու մեռի:

Կըսե. - Քոսա՛, դու էլի վե, թող իմ իշվանք փիտնան, համա դու չմեռիս, ջահնամ զիմ իշվանք:

Քոսեն է՛ կ'էլնի մոր կերթա ուր տուն: Էն կը հասնի ուր մուրազին դուն էլ՝ քո:

